ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր № 07/23.2/10374-18
17.12.2018թ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր՝ 2018 թվականի դեկտեմբերի 10-ի N340-51 գրության, հայտնում ենք հետևյալը.

1. 2016 և 2017 թվականների ընթացքում Ձեր գերատեսչության կողմից ստացված տեղեկություն ստանալու հարցումների տարեկան վիճակագրությունների հրապարակման աղբյուրները:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից 2016 և 2017 թվականների ընթացքում ստացված տեղեկություն ստանալու հարցումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը տե՛ս հետևյալ հղումով. http://mineconomy.am/hy/125

2. 2018 թվականի 1-3-րդ եռամսյակների ընթացքում Ձեր գերատեսչության կողմից ստացված տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրության հրապարակման աղբյուրը.

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից 2018 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում ստացված տեղեկություն ստանալու հարցումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը տե՛ս հետևյալ հղումով. http://mineconomy.am/hy/125

Կատարող՝ Նելլի Փաշինյան,
Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն, 011 597211

- **2016-2017 թվականների և 2018 թվականի 1-3 եռամսյակների ընթացքում ձեր գերատեսչությանը տեղեկություն ստանալու հարցմամբ դիմողներից քանի՞ սն են եղել քաղաքացի, քանի՞ սը՝ ՀԿ և քանի՞ սը՝ լրագրող:**

Խնդրում ենք տվյալները տրամադրել առանձնացված՝ ըստ նշված ժամանակահատվածների:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից ստացված տեղեկություն ստանալու համար հարցումների թիվը կազմել է.

2016 թվականին՝ 9824 հարցում, այդ թվում՝ 92-ը ՀԿ-ների կողմից, 746-ը՝ լրագրող/լրատվամիջոցների և 8986-ը՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից:

2017 թվականին՝ 11946 հարցում, այդ թվում՝ 100-ը ՀԿ-ների կողմից, 938-ը՝ լրագրող/լրատվամիջոցների, 10908-ը՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից:

2018 թվականի 1-3-րդ եռամսյակների ընթացքում՝ 8094 հարցում, այդ թվում՝ 87-ը ՀԿ-ների կողմից, 528-ը՝ լրագրող/լրատվամիջոցների, 7479-ը՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից:

Ներկայացված տեղեկատվությունը պատրաստվել է նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների և նախարարության գործակալությունների կողմից տրված տեղեկանքների հիման վրա:

Հարգանքով՝

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ